ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՆԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արթուր Աթանեսյան
Քաղաքական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ Սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ

ՀՀ ազգային տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների քննարկումն ու դրանց հնարավոր լուծումների մշակումը (ցավոք, մի շարք հարցերում ուշացած և ոչ մասնագիտական, հաճախ՝ զուտ ձևական մակարդակով իրականացվող) խիստ արդիական են: Հաճախ նկատելի է տեղեկատվական անվտանգությամբ զբաղվելու յուրահատուկ «նորաձևություն»: Շատերին թվում է, թե դա «զբաղմունք» է, որը հեշտ է, մասնագիտական գիտելիքներ, տրամաբանություն և փորձ չի պահանջում: Դրա հետևանքով է, որ ՀՀ ազգային տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում առկա են բազում հիմնախնդիրներ, որոնց հետևանքների զոհն է յուրաքանչյուր հայ: Մեր կողմից ՀՀ ազգային տեղեկատվական անվտանգության վերլուծության երեք մակարդակների առանձնացումն ու սպառնալիքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներպետական ծագում ունեցող սպառնալիքները մեր տեղեկատվական անվտանգությանը պակաս չեն, քան արտաքին սպառնալիքները, ինչը վկայում է մեզանում ազգային տեղեկատվական անվտանգության հանդեպ առնվազն անփույթ վերաբերմունքի մասին:

1. **Ներպետական մակարդակում Հայաստանի և հայ հասարակության տեղեկատվական անվտանգությանն ուղղված սպառնալիքներն են.**

- Սպառնալիքներ հայերի ազգային ինքնությանը և միասնականությանը
- Պետության և հասարակության, իշխանության և ընտրողների, բնակչության տարբեր շերտերի միջև համարժեք, դինամիկ և գործառնական հաղորդակցական կապի բացակայությունը
- Սպառնալիքներ ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքներին ինչպես պետության ներսում, այնպես էլ պետությունից դուրս ժամանակավորապես գտնվելու, աշխատելու և սովորելու ընթացքում
- Կրթական գործընթացների և հատկապես միջնակարգ կրթության բովանդակության որակի մասնագիտական հիմնավորման բացակայությունը
- Կրթամշակութային քաղաքականության բացակայությունը
- Ազգային միասնականության բացակայություն մի շարք հարցերի առնչությամբ, որոնք ունեն ռազմավարական նշանակություն ՀՀ, ԼՂՀ և հայ ժողովրդի անվտանգության տեսանկյունից
- Հայաստանի թույլ և անբավարար քաղաքականությունը՝ հայ հասարակությանը և հայկական սփյուռքին ընդհանրական տեղեկատվական-հաղորդակցական և կրթամշակութային դաշտում միավորելու ուղղությամբ
- Պետության քաղաքացիների գիտակցության և վարքի ենթարկվածությունը տարաբնույթ տեղեկատվական-քարոզչական շահարկումներին, որոնք ազատորեն իրականացվում են ԶԼՄ-ով և տարածում ազգային արժեքներին սպառնացող հակարժեքներ, վարքի անթույլատրելի, շեղվող և քրեապես պատժելի նորմեր և այլն
- Պետական քաղաքականության և սեփականության բացակայությունը կապի ոլորտում, արտասահմանյան ընկերությունների կողմից հայաստանյան հեռախոսային շուկայի մենաշնորհումը, պետության կողմից քաղաքացիների շահերի պաշտպանության

բացակայությունը հեռախոսային և ինտերնետային ծառայություններից օգտվելու ոլորտում

- Զանգվածային հաղորդակցությունների ոլորտում տեղական արտադրանքի ցածր մակարդակն ու անմրցունակությունը, պետական անբավարար վերահսկողությունը մեդիա-շուկայում տեղական և արտասահմանյան արտադրանքի նկատմամբ
- Չհավաստագրված, անորակ համակարգչային արտադրանքի և ծրագրերի օգտագործումը, որոնք խախտում են տեղեկատվական և հաղորդակցական համակարգերի և ցանցերի նորմալ գործառումը:

2. **Տարածաշրջանային մակարդակում ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական անվտանգության հիմնական սպառնալիքներն են.**

- Ադրբեջանի Հանրապետության կողմից ՀՀ և ԼՂՀ անվտանգության խարխլմանն ուղղված, համակարգված և անընդմեջ իրականացվող տեղեկատվական պատերազմը, որի նպատակներից են՝ այլափոխել Հայաստանի և Հայության միջազգային իմիջը, տարածաշրջանում և աշխարհում առաջացնել և ամրապնդել հակահայաստանյան և հակահայկական տրամադրություններ և համապատասխան քաղաքականություն, խթանել ղարաբաղյան հակամարտության ադրբեջանամետ լուծումը և այլն
- Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության իրողության հերքումը տեղեկատվական-քարոզչական հակադրման տարաբնույթ միջոցների կիրառմամբ
- Սպառնալիքներ ՀՀ և ԼՂՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը
- Սպառնալիքներ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացումն ու այլափոխումը տարածաշրջանային պետությունների տարածքում
- Հայաստանի պասիվ մասնակցությունը տարածաշրջանային նախագծերին, որոնք ենթադրում են հաղորդակցական ուղիների և միջոցների հեռանկարային զարգացում:

3. **Գլոբալ մակարդակում Հայաստանի և հայ ժողովրդի տեղեկատվական անվտանգության սպառնալիքներից են.**

- Սպառնալիքներ հայերի ազգային ինքնությանն այլ պետություններում
- Սպառնալիքներ հայկական սփյուռքի միասնականությանն ու ՀՀ-ի և հայ հասարակության հետ գործառնական կապերին
- Սպառնալիքներ Հայաստանի միջազգային վարկանիշին և կերպարին՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, քաղաքակրթական իմաստով
- Սպառնալիքներ՝ ուղղված քաղաքական որոշումների մշակմանն ու իրականացմանը, կապված աշխարհում Հայաստանի դերի ամրապնդման և զարգացման հետ: